



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Օտարազգայնացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՅ 1884 թիւն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՑՈՎ

ՊՐՕԳՐԱՄԱՍ

I. ՏԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ: II. ԱՌԱՋՆՈՐԴՈՎ ՅՕԴՈՒՄՆԵՐ: III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: VI. ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ: VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ֆելիետոն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերէն, թղթակցութիւններ: VIII. ՑԱՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՍՏԱՆՈՐԳԱԳԻՆ: Տարեկան 10 ռուբլ, վեց ամսուայ 6 ռուբլ, իւրաքանչիւր ամսուայ 1 ռուբլ: ՀԱՏՈՎ համարները 5 կոպեկ: ՀԱՍՏԵՆ. Тифлис, редакция «Мшак».

Խմբագիր—Հրատարակող ԳԻՐԳՐԱՐ ԱՐԾՐՈՒՆԻ

МАГАЗИНЪ офицерскихъ вещей
САЛАМБЕКОВА, на Дворцовой улицѣ,
въ домѣ Сараджева, будетъ открытъ
въ четвергъ, сего 15-го декабря.

1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կաթողիկոսական հարցի առիթով:—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտաքին լուրեր:—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ:—ՑԱՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Առողջապահութեան մասին:

ԿԱՌՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

II.

Մեր անցեալ յօդուածում կանգ առինք այն տեղի վրա, թէ որն աւելի նպատակայարմար է, արդեօք նորընտրելի կաթողիկոսը պէտք է տաճկաստանցի լինի, թէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մարդկային օրգանիզմը կատարելապէս վերահաստատում է բնութեան ամեն մի ապրող բանի համար դրած օրէնքը, թէ շարժողութիւնը կեանք է և ընդհակառակը կեանքը շարժողութիւնն է: Մարդու սիրտը, արիւնը և մարմնի բոլոր հիւթերը զանգված են անդադու շարժողութեան մէջ: Կեանքը պայմանաւորող իրերի փոփոխութիւնը կատարվում է անդադու շարժողութեան օրէնքի դժուար: Այդ շարժողութեան չափից և աստիճանից է կախված մեր առողջութեան, մեր բնութեան եռանդի, մեր ձգտումների ուղղութեան չափը և ամրութիւնը: Ահա այդ իսկ նպատակով մեր մարմինը ունի մի բաւական բարդ գործարան, որի միջնորդութեամբ և շարժվում է մեր մարմինը: Այս գործարանը բաղկացած է ջրերի զանազան խմբերից, որոնք կարողութիւն են տալիս մեզ շարժվել, ընդունել յարմար դիմել, կատարել միջին: Նախանգործներ և դրանով մի կտոր հաց աշխատել: Սրանից պարզ է, որ ջրերը պիտի լինեն կանոնաւոր շարժողութեան մէջ: Նրանք չը պիտի մնան անգործութեան, անշարժութեան մէջ ընդարձակ: Ջրային աշխատանքը նշանակված զարմանքի և չափերի մէջ մեծ ֆակտոր է մարդու կեանքի ֆիզիոլոգիական և մտաւորական

ուսաստանցի, կամ թէ մի այլ երկրից: Այդ հարցը լուծելու համար, նախ հարկաւոր է պարզել, թէ իսկապէս իրաւասութիւն կամ նշանակութիւն ունի իշմիածնի կաթողիկոսը:—Հայոց եկեղեցին իր պատմական և աւանդական սովորութիւններով, որոնք օրէնքի գործութիւն են ստացել, ընդունել է և ընդունում է իշմիածնի կաթողիկոսին որպէս ս. Գրիգոր Լուսաւորչի աթոռի ժառանգ և որպէս ընդհանուր հայոց ծայրագոյն հայրապետ: Ուրեմն, որտեղայն է լինեք այդ աթոռակալը, մի և նոյն է, միայն թէ նա պէտք է ունենայ այն արժանաւորութիւնները, որ պահանջում է նրա բարձր կոչումը:

Առարկողներ կան, թէ որովհետեւ իշմիածնի կաթողիկոսի իրաւասութիւնը տաւրածվում է գլխաւորապէս Ռուսաստանի հայերի վրա, և թէ նա գործ ունի գլխա-

կանքի զարգացման համար: Մարմնի անդամները սկսած ուղղից, պիտի միշտ չլինեն, քսվեն աշխատանքի և գործունեութեան մէջ: Մեզանում մենք տեսնում ենք այս կանոնի կամ չափազանցութիւն, կամ աշխատողութիւն: Ապահովված կեանք ունեցողները մի առանձին հաճութիւն են համարում անցուցանել ժամանակը կատարելով անդործութեան, կատարելով ոչինչ չանելու մէջ. ոչ մի ջրային կամ մտաւոր աշխատանք չէ շարժում նրանց անդամները: և դրանով նրանք մնում են առանց զարգացողութեան, անկանոն անձանք: Նրանք միայն միայն զանազան կարելի է լսել ծանրութեան, ստամոքսի խանգարման մասին. այդպիսի մարդը կը ծուլանայ կամ իրա պատուի ստորութիւն կը համարէ ոտքով ման գալը, բայց մեծ հաճութեամբ կը դիմէ զանազան զեղորայքի օգնութեան, որով եթէ օգտվում էլ է, բայց ժամանակաւորապէս և մարմինը շարժունակում է մնալ իր անճոռնի, անկանոն գարգացման մէջ, որ միայն նեղութիւն է պատճառում անհատին: Այս դեպքում պակաս տարօրինակ չէ երևում մեր միջին դասի կանայքի սեռը: Միջին դասի կանայքը և աղջկանքը առհասարակ ոչինչ են անում և ամեն մի չնիւն բան յանձնում են ծծմայրերին, աղայիներին: Սակայն ջրային մարզման դերապաստութիւնը մենք կարող ենք տեսնել, համեմատելով մեր գիւղական կիսընդարձակ միջին դասի կնոջ հետ. առաջինի ջրային սիստեման բաւական զարգացած է, նա

ւորապէս Ռուսաստանի հայերի հետ, այդ պատճառով, աւելի լաւ է, որ նա ուսաստանցի լինի, որպէս զի, տեղային հանգամանքների հետ ծանօթ լինելով, կարողանայ իրան յանձնված հարց օրինաւոր կերպով կառավարել:

Եթէ ընդունենք այդ առարկութիւնը իբրեւ անհրաժեշտ պայման, այն ժամանակ պէտք է հարցը շատ պարզ դնել:—Այլ ևս ի՞նչու ենք տալիս իշմիածնի կաթողիկոսին ընդհանուր հայոց ծայրագոյն հայրապետի տիտղոսը, եթէ նա միմիայն Ռուսաստանի հայերի հոգեւոր պետն է, և եթէ նա պէտք է ծանալէ և հոգ տանէ միայն Ռուսաստանի սահմանների մէջ բնակված հայերի վերաբերմանը: Եթէ այդ ճիշտ համարենք, այն ժամանակ կաթողիկոսի ընդարձակ նշանակութիւնը ինքն ըստ ինքեան կը փոքրանայ և նա կը դառնայ իշմիածնի վանքի վանահայր և Ռուսաստանի հայերի հոգեւոր առաջնորդ, իսկ աւելի—ոչինչ:

Այդ դեպքում, իշմիածնի կաթողիկոսը նոյն նշանակութիւնը կունենայ իր վիճակի համար, ինչ նշանակութիւն որ ունի Աղթամարի կաթողիկոսը Աղթամարի վիճակի համար, և Սիւնի կաթողիկոսը Վիլնիայի համար, որոնց իրաւասութեան չափը իրանց վանքի և վիճակների սահմաններէն դուրս չէ գնում:

Վերջիշեալ առարկութիւնից,—թէ իշմիածնի կաթողիկոսը միմիայն Ռուսաստանի հայերի համար է և պէտք է ուսաստանցի լինի,—ինքն ըստ ինքեան ծագում է մի այլ աւելի ծանրաշիւղ հարց ևս, որ ոչ սակաւ երկպառակութիւնների կարող է առթիւ տալ: Որովհետեւ, եթէ ընդունենք, որ իշմիածնի կաթողիկոսը միայն մեզ է պատկանում, այն ժամանակ մենք մեր բոլոր կապերը կաթողիկոսի ընտրութեան վերաբերութեամբ պէտք է խզենք թէ ճաշկաստանի հայերի

հետ և թէ այլ պետութիւնների մէջ ապրող հայերի հետ: Այլ ևս ի՞նչու ենք թոյլ տալիս, որ տաճկաստանցին իր ձայների մեծամասնութեամբ խեղդէր մեզ, այլ ևս ի՞նչու ենք թոյլ տալիս, որ պարսկաստանցին, հնդկացին և եգիպտացին մասնակցէր մեր կաթողիկոսի ընտրութեան գործի մէջ: Մենք կընտրենք մեր կաթողիկոսին, ում որ կը ցանկանայինք, որպէս Աղթամարի վիճակը ընտրում է իր կաթողիկոսին, և որպէս Սիւնի վիճակը ընտրում է Վիլնիայի կաթողիկոսին:

Բայց այդ անել մենք ոչ կարող ենք և ոչ էլ անելու իրաւունք ունենք: Դա սխալ և միանգամայն ամենապակասարկ տեսակէրութիւն է:

Իշմիածնի կաթողիկոսը ընդհանուր հայոց ծայրագոյն հայրապետն է, որ երկրում և ուր պետութեան մէջ գետնազված լինէին հայերը: Նրա ընտրութիւնը կախում ունի ամբողջ ազգից և ոչ թէ նրա մի մասնից: Այդ դրութիւնը ստեղծել է ինքը պատմութիւնը, և ոչինչ փաստերի կարօտ չէ: Իշմիածնի կաթողիկոսի հոգեւոր գերիշխանութիւնը տարածվում է երկրագնդի բոլոր հայերի վրա, տարբերութիւնը միայն չափերի մէջն է, թէ ինչ պետութիւն ի՞նչ չափով սահման է դրել նրա իրաւունքներին: Պարսկաստանի և Հնդկաստանի հայերը ենթարկվում են իշմիածնի կաթողիկոսի անմիջական իշխանութեանը. նա է նշանակում և ուղարկում այդ երկրների թեմական առաջնորդներին: ճաշկաստանի հայոց երկու կաթողիկոսները (Աղթամարի և Սիւնի) և երկու պատրիարքները (Երուսաղէմի և Վ. Պոլսի) ամեն մի ծանրաշիւղ եկեղեցական հարցում դիմում են իշմիածնի կաթողիկոսին: Նա միայն իրաւունք ունի ընդհանուր ժողով հրաւիրելու և եկեղեցական ծանրաշիւղ հարցերը վճռելու:

Ըն հետևանքներ: Որքան ծանր է տեսնել զանազան շրջանի պարագ ծոյրերի աննպատակ ու անկարգ կեանքը, այնքան էլ ծանր է տեսնել բանաւորներին, որոնք չափազանց լարված ջրերը գործում են օրն ի օրում. մարդու օրգանիզմի ֆիզիոլոգիական կեանքը ընթանում է կարելի եղածին չափ սահմաններում. անչափաւոր, անկանոն աշխատանքը սպառում է նրա կենսական ոյժերը և բերում է իր հետ թուլութիւն, յոգնածութիւն, հիւսկանութիւն, մահ: Ուրքան մարդն ունի կարողութիւն ապրել, այսինքն որքան նիւթական միջոց ունի իր ուտելիքը հալթալթելու, այնքան էլ նա պիտի գործի դնէ իր ջրերը, այնքան էլ նա պիտի աշխատէ: Սակայն ընդունված սովորութիւնը հակառակ է գնում առողջապահութեան այս կանոնին. շատ աշխատող մարդը շատ քիչ է ստանում վարձ, և անկարող է լինում այդ վարձով այնքան մոտեց հալթալթել իր համար որ կարողանայ նրան համապատասխանող ջրային աշխատանք ունենալ: Աշխատիլը դուրս է գալիս մի այսպիսի անկանոն բան. շատ լաւ կերակրվողները շատ քիչ են բանում, և ընդհակառակն, այստեղից է դուրս գալիս և այն հանգամանքը, որ աշխատող, գործող դասի մէջ մահը այնչափ զարգացած է լինում: Առողջապահութիւնը խիստ ընդդէմ է այդ կարգին. նա պահանջում է, որ աշխատանքը համապատասխանէր կերակրի, որ աշխատութեան ու հանգստութեանը միմեանց հետ փոփոխվէին կանոնաւոր կերպով:

լու: Կ. Պօլսի պատրիարքը, ճաճկաստանի հայոց ազգային սահմանադրութեան կանոններով, համարվում է ՆՋմիաճնի կաթողիկոսի փոխանորդը, և նրա միջնորդութեամբ կաթողիկոսի իրաւունքները տարածվում են ամբողջ ճաճկաստանի հայերի վրա:

Իրաւ է, եղել են ժամանակներ, որ ՆՋմիաճնի կաթողիկոսի յարաբերութիւնները կամ նրա կապերը թուլացել են Կ. Պօլսի պատրիարքարանի հետ, բայց զրա պատճառները պէտք է որոնել աւելի այդ երկու աթոռները կառավարող անձնաւորութիւնների մէջ, քան թէ վարդապետը արդէն ընդունված պաշտօնական գրութիւնների մէջ: Նոյն իսկ Ռուսաստանում երբեմն կաթողիկոսի յարաբերութիւնները այս և այն թեմական առաջնորդի հետ սուր ձև են ստանում, բայց այսպիսի դեպքերը պէտք է բացառութիւն համարել:

Այդ բոլորից այն եզրակացութեան ենք հասնում, որ երկրացիութեան խնդիրը կաթողիկոսի ընտրութեան գործի մէջ բոլորովին անխմտ խնդիրներից մէկն է: Ընդհանուր հայոց կաթողիկոսը խիստ ընդարձակ սահման ունի իր հովուապետութեան համար: Նրա հոգեւոր գերիշխանութիւնը չէ պայմանաւորվում միայն Ռուսաստանով: Այդ պատճառով, բաւական չէ, որ նա միայն Ռուսաց հայերի հոգեւոր պետքերը ծանաչէր և միայն նրանց համար հոգ տանէր: Նա պէտք է ունենայ ընդարձակ, բազմակողմանի հմտութիւններ, որ կարողանայ ընդհանուր հայերի պետքերի համաձայն գործել:

Եւ ի՞նչ պատճառներ ունենք երկազրելու, որ մի տաճկաստանցի, պարսկաստանցի կամ հնդկացի եպիսկոպոս, որը արդէն յայտնի է ազգի մէջ իր հոգեւոր և բարոյական արժանաւորութիւններով, իր վարչական տաղանդով, — մի այդպիսի եպիսկոպոս անընդունակ կը լինի Ռուսաստանի հայերին կառավարելու, որովհետեւ տեղային պայմաններին անծանօթ է: Հետաքրքիր է գիտենալ, թէ որովհետեւ այդ տեղային պայմանները: Ռուսաստանի հայոց հոգեւոր կառավարութիւնը այն աստիճան չափի և սահմանի մէջ է դրված, որ մի կաթողիկոս, որքան էլ որ անծանօթ լինէր, մի քանի օրվայ մէջ կարող է հասկանալ

թէ իր պարտաւորութիւնները և թէ իր իրաւունքները, բաւական է, որ նա կառավարելու ընդունակութիւններ ունենար: Հանգուցեալ Գեորգ կաթողիկոսը Ռուսաստանցի էր, բայց նա Ռուսաստանը աւելի լաւ էր ծանաչում, քան թէ մեր բոլոր եպիսկոպոսները, բայց եթէ նա չը կարողացաւ գոհացնել մեզ, զրա պատճառը պէտք է որոնել՝ ոչ թէ այն բանի մէջ, որ նա բոլոր սացի էր, այլ նրա անձնական յատկութիւնների մէջ:

Մի այլ կարեւոր կէտ ևս պէտք է ի նշնադրել: ՆՋմիաճնի հոգեւոր կառավարութեան մէջ վարչական մարմինը իր կապէս Սինօդին է, նա է կառավարում անտեսական կամ երկմտական մասը, նա է կառավարում գաղտնաստանական մասը, նա է ղեկավարներին պատժելու կամ ապաշխարութեան ենթարկելու, նա է հսկում թեմական կամ վիճակային կոնսիստորիաների վրա, նա է հսկում եկեղեցական կառուածքների վրա, մի խօսքով, կառավարութիւնը Սինօդի ձեռքումն է: Կաթողիկոսը Սինօդի նախագահն է, միայն սակ կրօնական հարցերի մէջ նա բացարձակ ձայն ունի: Ռուսիայի կաթողիկոսի Ռուսաստանը ծանաչելու կամ չը ծանաչելը ի՞նչ մի առանձին նշանակութիւն ունի, քանի որ նա իր գործողութիւնների մէջ պէտք է յիշել զխաւորապէս Սինօդի կարգադրութիւնների վրա: Եթէ Սինօդը արժանաւորապէս անդամներէր կազմակերպված լինի, ամեն ինչ օրինաւոր կերպով կը կատարվի, և կաթողիկոսը, որքան էլ որ անփորձ լինէր տեղային պահանջների մէջ, այսուամենայնիւ երբեք սխալներ չի գործի:

Այդ բոլորից յետոյ, մենք ամենեւին նշնադրելու ենք պետական պնդել այն կարծիքը վրա, թէ նորընտիր կաթողիկոսը պէտք է քննադատաւ օտարերկրացի լինի, և ոչ թէ Ռուսաստանցի: Ամենայն հայոց կաթողիկոսը կարող է ընտրված լինել ամեն երկրից, եթէ նա այդ կողմանը արժանի է: Եւ եթէ մեր եպիսկոպոսները մէջ ևս կան արժանաւոր անձինք, ի՞նչու ենք ծածկում, շտապենք, ցոյց տանք բոլոր հայերին, որպէս զի ի նկատի ունենան, որովհետեւ ընտրողները միայն մենք, Ռուսաստանցիներ, չենք, այլ թուով աւելի շատ ձայներ ունեն օտար երկրների հայերը:

Եթէ որ և է ազգի քաղաքակրթութեան և կուլտուրայի մասին կարող լինել վկայել այդ ազգի մէջ ծախված սպասելի քանակութիւնը, որ գործ է ծածկում սեփական մարմինը և շուրթերը մարդկութեան համար, մենք կը տեսնէինք, որ հայ ազգը այդ կողմանէ շատ ստոր, շատ ցած դրութեան մէջ է գտնվում: Մարդու կաշին մի շատ հարկաւոր և քնքշող օրգան է, նրա մէջ գտնվող անհամար փոքրիկ ծակերը միջնորդութեամբ արիւնը իստակվում է, դիպելով արտաքին օդին թթուածինի հետ: Բացի դրանից այդ ծակերով դուրս են դալիս քրտինքը, այսպէս անուանված կաշու ճարպը և այլն: Երբ կաշին մաքուր չէ, այդ ծակերը ծածկվում են կեղտով և դրանով կաշին դրկվում է իր մեծ նշանակութիւնից, անկարող է լինում ծառայել իր նշանակութեանը: Ուրեմն հասկանալի է, որ կաշին պէտք է շատ մաքուր պահել: Բայց ինչ ենք տեսնում մեր մէջ: — Երկու խիստ ծայրայեղութիւններ: Բաղնիքներ մեր հայերի մէջ չը կան, այս մենք ասում ենք, աչքի առաջ ունենալով մեր ժողովրդական տարրի ահագին մեծամասնութեան — գիւղացիների անմաքուրթիւնը, մեծ մեծ քաղցրեղութեամբ հազիւ է կարելի դտնել երկու կամ երեք քաղանք, ուր մարդիկ յաճախում են ամենաշատը երեք կամ չորս շաբաթ մը: Եւ այդպիսի ճաղուղիները հազուադէպ են հասարակութիւնը (10—15 հազար), ինչպէս ասում են, «Եօլայ» դնում» մի հատ բաղնիքով, որ անողջապահական կողմից էլ լաւ դրութեան մէջ չէ գտնվում, բոլոր

բաղնիքի մէջ շուտ չէ փոխվում, և առհասարակ ընդունված սովորութիւնների չնօրհիւ մարդ այդ տեղ շատ անգամ հիւանդութիւն է ստանում: Տեսնե՛ք չուլցուցու փող մանկիւս, անկանոն և միանգամայն վիճառակար ծախսեր անկէս և դուք կը գարմանաք, բայց նայեցէ՛ք քաղաքի անմաքութեան, բաղնիքների բացակայութեան վրա — դուք կը համոզվե՛ք, որ մարդկութիւնը այստեղ ապրում է միայն փորի համար, և ապրում է անհուշազիր թողնելով իր մարմինը: Այսպէս է և միւս տեղերում: Ամբողջ Ղարաբաղի ահագին վիճակում ինձ յայտնի չէ մի վիճակ, որ բաղնիք ունենար: Եւ ինչպէս է դիւղացին մաքրութիւն պահում: Նա ամբողջ ամիսներով մի հալաւ ունի հազիր, հալաւը, շատ քրտնեղաց ծածկվում է աղի բարակ շերտով և տախտակի ալէս դմարաթիւնութիւն է ստանում, իսկ միւս հազուադէպ անփոփոխ մնում է նրա վրա մինչև փախը, տարին մի անգամ հազիւ այդ շուրթը ջրի երես տեսնել: Մեզ պատահել է շատ անգամ տեսնել գիւղացիների մերկ սրունքները և թևերը, որոնք կեղտից սևացել էին, կարծես կարող օծած լինէին, այսպիսի հազուատեսութեամբ ահագին առատութեամբ բոյն են դնում միջատները, գիւղացին համարում է նրանց բնական բան, ինչպէս իր մարմնի մաղերը, կամ միւս անդամները: Ո՞վ չէ տեսել նրան նստած արիւնքաթիւնքով, եղունգներով ջարդելիս այդ միջատները, ով չէ տեսել թռչունների շուրթը բազմա՛ մարդիկ, որոնք, թափ են տալիս նրա մէջ իրանց հալունքը, ոտաչորերը, արխաւունքները,

Հետեւեալ յօդուածում մենք կը խօսենք արդէն յայտնի ընտրելիների մասին:

Մէլքիզադէ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՒՆ

Միտքաբար, դեկտ. 3-ին

Արաքսաբեր հայոց ռուսամարանին կից ընթերցարանի նորոգ վարչութիւնը սկսած է ամենայն եռանդով աշխատել՝ այդ հիմնարկութիւնը ընթերցող հասարակութեան համար: Առաջիկայ 1884 թուականի համար՝ պարբերական հրատարակութիւններից մեծ մասը նուիրվեցան, արդէն վարձված են երկու յարմարաւոր սենեակներ, որոնք զարդարվել են վաղեւի կերպով, լինում են նուիրարարութիւններ և ընթերցանելի գրքերի համար: Միւս կողմից թատրոնային երիտասարդները պատրաստվում են ներկայացումներ տալ յոգուտ ընթերցարանի, որ ռուսամարանի մի մասն է կազմում: Մի փոքրիկ գաւառական քաղաքի երիտասարդական փոքրիկ խմբի յիշատակաւ ջանքերը տեսնելով, լիպոյս ենք, որ մեր բարեգործ անհատները, խմբագիրները, հեղինակները և թարգմանիչները չեն դաժնայ նուիրել իրանց օժանդակութիւնը՝ դրքերով և հրատարակութիւններով:

Ներկայ 1883 թուականի ընթացքում և առաջիկայ 84 թուի համար ընթերցարանին գրքերով, պարբերական հրատարակութիւններով և այլ նուէրներով նպաստեցին հետեւեալ անձինք՝ Մոսկվայի յարմար մեծ. Գ. Գովմանիանց, մեծ. Գով. Խոյ. միտքային, ալեքսանդրապոլցի մեծ. Արշակ Խանա-նուշեանց, Նիկոլայուս Մատիւսեանց, Խաչ. Գիւլանեանց, երևանցի բժիշկ մեծ. Լ. Տիգրանեանց, Խաչադարեանց — մեծ. Սար. Գարութիւնեանց, Արտաշէս և Լ. Գովմանիանց, Գով. Տէր-Ալի-բախտեանց, Մար. Գեմրեզովեանց, Տիկ. Փեմբրոնիէ Ղազանեանց, Սեմի. և Վարդան Վարդանեանց, Խաչ. Մաւանդիդեանց, Բ. Պիճիկեանց, Կ. Պապիւնեանց, Գ. Աւանդեանց, Տիգ. Մեխիկեանց, Ա. Գրիգորեանց, Գով. Ժա. Քաջապուտի, իրիք-լիւցի: Գ. Միկայելեանց, սաչիսեանց Մ. Ամարեղ-եանց և ախալցախցի Գ. Քաջաբեկեանց: Յիշատակված նուիրատու պարսներին, տիկնոջ և տէր-հօրը յայտնում ենք հրապարակաւ ընթերցարանի վարչութեան խորին շնորհակալութիւնը:

Յարգելի խմբագիր, դուք և բարոյապէս նպաստած կը լինիք մեր աղքատիկ ընթերցարանին, տեղաւորելով մեր ներկայ գրութիւնը ձեր յարգելի լրագրի մէջ:

Նախադաս վարչութեան ընթերցարանի՝ Սեմ. Կաննոս քա. Գեմրեզովեանց:

մինչև անգամ չուրաններն ու փափանքները և մի առանձին սրտաշուրթութեամբ ախանք են դնում, թէ ինչպէս են այրվում միջատները թռչուն-րի կրակի մէջ. և ով չէ մի ծանր, զգուշացնող արտայայտող երեսով հետաքննել նրանցից: Այսպիսի հանգամանքների մէջ, ասացե՛ք խնդրեմ, ինչպէս է կարող կաշին կատարել իր գործը, ինչպէս է կարող մարդը ունենալ առողջութիւն և ոյժ գործելու: Այո, ուսրաբեկին են այս պայմանները, մահառիթ են: Միւս կողմից տեսնում ենք մի այլ ծայրայեղութիւն: Հայերը օրեցօր զարգանում են, օրեցօր, այսպէս ասած, եւրօպականացանք են և ընդունում են եւրօպացիներից նրանց սովորութիւնները՝ մօղանքը, թէպէտ մեր մէջ դեռ ընդհանրութիւն չէ դարձել, բայց քիչ քիչ մասնում են երիւր ներկրում, կամ դանաղան հոտաւէտ ջրերով պոմպներով, պոկոզանքով մարմինը օծելու սովորութիւնը: Առողջապահութիւնը բոլորովին ընդդէմ է այդ ծայրայեղութեանը, նա կատարելապէս արգելում է այդ սովորութիւնը, որ նոյնպէս վնասակար է, ինչպէս կաշին անմաքութիւնը, զանազան օժանդակ է իւզելու կորստաբեր գործողութիւն ունեն առողջութեան վրա: Առողջապահութիւնը զղուանքով է յանդիման կանգնում այդպիսի դէժ սովորութիւնների դէմ, նա պահանջում է մաքրութիւն և հաստատում է, որ մաքրութիւնը և պարզութիւնը գեղեցկութիւն է, և որ ոչ մի զարդարանք չէ կարող լցնել որ և է ֆիզիքական կամ աղ պակասութիւնների տեղը: Նա պահանջում է ևս, որ մարդը չը գրկէ իրան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Գեկտեմբերի 11-ին, կիրակի գիշերը, ժամը 2-ին անյայտ չարագործներ կոտորելով մեր աշխատակից Բաֆֆի բնակարանին լուսամուտներից մէկը, որը թաղվում է դէպի պարտեզը, մտնում են նրա կարնետը, այստեղից անցնում են մի այլ սենեակ, յետոյ փորձ են փորձում մտնել քնարանը: Լուսամուտի կոտորելու ձայնից արդէն զարթած և պատրաստ է լինում Բաֆֆին, և բեմբոլելով ձեռքն զուսն ետեղից սկսում է պաշտպանվել և թոյլ չը տալ, որ քնարանը մտնեն: Մի քանի րոպէ տեսում է սաստիկ ընդդիմադրութիւն երկու կողմից ևս, մինչև չարագործները վախենալով, մի գուցէ ատրճանակների ձայնից դիտարկաւանքը կամ հարեանները վրա հասնեն, թողնում ու փախչում են: Չը նայելով, որ չարագործները բաւական ժամանակ և դիւրութիւն ունէին իրանց գողութեան համար, բայց բնակարանից ոչինչ չեն տարել, մինչև անգամ կարնետում գրասեղանի վրա դրած փողը և զանազան թանկագին իրեղէններ մնացել են անշարժ: Այդ բոլոր կարծիք է տալիս, որ կատարածաւոր գիշերառնունքը հասարակ դուր չեն եղել՝ այլ մտել են միայն յարգելի վիպասանի անձին փնտնելու համար, որը ազատվել է անվնաս: Առաւօտեան ոտովկանութիւնը հետազօտեց բնակարանը, քննեց անցքը և նոյն կարծիքը յայտնեց, որ գործողութիւնը գողութեան նպատակով չէ կատարված: Միջոցներ են ձեռք առնված գտնելու չարագործներին:

Կիրակի, դեկտեմբերի 11-ին, թեմիս առաջնորդ գեր. Արիտտակէս սրբադանի և բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ կատարվեցաւ Հայուհայ Բարեգործական ընկերութեան հակողութեան յանձնված Ս. Նշան եկեղեցու ծխական օրիորդաց ռուսամարանի բացման և օրհնութեան հանդէսը: Ս. Պատարաղից յետոյ հոգեւորականութիւնը և հասարակութիւնը հաւաքվեցան Ս. Նշան եկեղեցուց ոչ հեռու գտնվող օրիորդական դպրոցի շինութեան մէջ, ուր հոգեւորականութիւնը օրհնեց ռուսամարանի շինութիւնը, որից յետոյ Հայուհայ Բարեգործական ընկերութեան նախագահուհի մեծ. տիկին Երեցեան դիմեց հասարակութեանը հետեւեալ խօսքերով. «Չիրդ սրբազնութիւն և մեծաշուք հանդիսականք, Հայուհայ Բարեգործական ընկերութեան կանոնադրութեան Բարձրագոյն կառավարութիւնից հաստատման օրից, մենք ամենայն կերպով աշխատել ենք ընկերութեանս թէ ներթափանց և թէ բարոյական վիճակը բարու-բեկու: Այսօր մենք ուրախութեամբ ցոյց ենք տալի մեր նպատակի մասամբ իւրեք իրագործումը: Այս ուրախութիւնը մենք պարտական ենք նորին սրբազնութեան, որովհետեւ երբ ս. Նշան եկեղեցու անունով ծխական ռուսամարանը բանալու խնդիր ծագեց, և սրբազանը տեղեակ լինելով արդէն մեր ընկերութեան մագրութեանը՝ օգնելով մի որ և իցէ ռուսամարանին իր նիւթական

բնական գեղեցկութիւններից: Մի ժամանակ կար, երբ ամեն մի լուսաւորեալ մարդ պարտք էր համարում երեսը ածելու: Գետոյ միտքը երեսն եկաւ ինչպէս ազատամտութեան նշան և յետոյ կրկին ենթարկվեցաւ հայաժանքներին: Այս ամենը տեղի էր ունենում առողջապահութիւնը չը գիտենայուց: Բայց միտքը, ինչպէս հաստատում են պրօֆեսոր Բէկլամ և շատերը, ունի նշանակութիւն առողջապահական տեսակետից:

Նա պահպանում է մարդուն զանազան ատամ-նային և կոկորդային ցւաւերից, և այս փորձված է շատ դէպքերում: Յանկալի է, որ միտքը դարձեալ քաղաքական դեր խաղալ և որ յետ դարձ-նէին նրան իր ֆիզիքական նշանակութիւնը: Մարդկութեան մէջ ահագին, դեղադանդող մեծամասնութիւնը ապրում է որովայնի համար: Միջոցը ընդունել է իր համար կենսական ուղի դրութիւն — ուտել և խմել. վերջինը — դարձացնել հասունացնել ուղիղը, այն օրգանը, որ մարդուն պահում է իր կողման մէջ, զանազանում է նրան միւս կենդանիներից: Առողջապահութիւնը երբեք չէ ծաղրում առաջինը և դրվում երկրորդը, այստեղ էլ նա դնում է սահմաններ, ուղիղը անպի-բանեցնող, յոգնեցնող մարդը նոյնպէս է, ինչպէս մեծամասնութիւնը, միայն իր օրովայնի մասին դարացի պահանջ է ներկայացնում, և ամեն մի խեղճի մարդ պիտի մշտել լինի, և ամեն մի խեղճի մշակ պիտի խնցի մարդ լինի: Ինչպէս է

միջոցներով, բարեհաճեցաւ հրաւիրել մեզ և յանձնել
այդ ուսումնական միջոցները, յայտնա-
բերել մեզ մի և նոյն ժամանակ, համաձայն ու-
նայն եկեղեցու ծխականների ցանկութեան, յա-
տուկ ուշադրութիւն դարձնել տնտեսագիտութեան
և ձեռագործի վրայ, որով կարելի լինի դնել մի-
ջանի չքաւոր օրիորդներին միջոց տալ իրանց ա-
պահովելու: Այս, այսօր յայտնում ենք մեր խո-
րին շնորհակալութիւնը սրբազան հօր, որ մեզ
քաջալերելով խոստացաւ անընդհատ իր հովանա-
ւորութիւնը, որը կը յուսանք մի գեղեցիկ գրաւա-
կան է գործել յարատուութեան և յաջողութեան:
Խնդրում ենք նոյնպէս յարգող հասարակութիւնից,
այսուհետև ևս չը դրել ընկերութիւնս իր օգուտ-
թիւնից, որովհետև ձեզ յայտն է, որ առանց
այդ օգնութեան մեր նորաբողոք ընկերութեան
գործունէութիւնը չէ կարող ընդլայնանալ և ընդար-
ձակվել: Յարգելի տիկնոջ փոքրիկ ճառից յետոյ
խօսեցին ուսուցիչ պ. Սիմոնեանցը նորահաստատ
ուսումնարանի նշանակութեան և աշխատանքի նշա-
նակութեան մասին և հայր Շիրմազանեա-
նը, որից յետոյ սրբազան առաջնորդը ասեց հե-
տեալը. «Կովկասի հայ տիկնոջները իրանց
հասարակական գործունէութեամբ բաւական յետ-
էին մնացել իրանց տաճկահայ ընկերից,
բայց այժմ ես յոյս ունեմ, որ Հայոհայեց
Բարեգործական ընկերութիւնը այնքան կը յառա-
ջարկէ, որ կը տարածէ իր գործունէութիւնը ոչ
թէ միայն թիֆլիսում, այլ և դաւառներում»: Ա-
պա սրբազանը ցաւ յայտնեց, որ Ս. Նշան եկե-
ղեցին չունի ուսումնարանի համար մի յարմարա-
ւոր շէնք և խոստացաւ, որ նորին սրբապետութիւնը,
հասարակութեան օգնութեամբ, կաշխատէ մի
տուն կառուցանելու ուսումնարանի համար: Վեր-
ջացնելով իր խօսքերը, սրբազանը օրհնեց Հայոհ-
հայ Ընկերութեան անդամներին և հասարակու-
թեանը, որով և վերջացաւ հանդէսը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բերլինց «Temps» լրագրին հետագումը են
նոյնքան 26-ից: «Լիբերալի» պատճառը եպիսկո-
պոսը ներկած է, զերմանական թագաժառանգը
պէտք է այցելէ պապին: Ան երկու լուրեր, որ
վերջական չիոթ պատճառեցին Բերլինի քաղա-
քական աշխարհին: Ոչ պահպանողականները, ոչ
ապստամբները և ոչ էլ կղերականները այդ բա-
նին չէին սպասում: Պաշտօնական լրագրները
դու ևս լուր են դրա մասին: «National Zei-
tung» լրագրը խոստանաւ, որ նա չիոթված է
Ամերիկայում, նա յոյս ունի, որ թագաժա-
ռանգը կայցելէ առաջ իտալական թագաժառանգին:
«Tagblatt» լրագրը հարց է բարձրացնում, ար-
դեօք թագաժառանգի այցելութիւնը պապին տա-
րածայնութիւն չի յարուցանի զերմանացիներին,

կարելի սրան հասնել. հաւասարաչափ կրթու-
թեամբ և անա ինչպէս: Կանաքի էութիւնը կայա-
նում է շրջապատող բնութեան հասկանալու մէջ
և նրա միջոց ինչպէս իր, նոյնպէս ուրիշների
համար ամեն կարելի օգուտը բարելու ձգտումը
մէջ: Կա մարդկութեան բարձրագոյն բարիքն է,
դա նրա ամենից խոհմ նպատակն է: Այսպիսի
մի ընդունակութեան համար բնութիւնը մեզ
տուել է մի առանձին օրգան—ուղեղ: Ուղեղը
զանազանում է միւս օրգաններից մանրէ առան-
ձին տեսակով, թէպէտ և նա գլխաւորապէս կե-
րակրում է արիւնով, բայց նրա մասնաւոր հար-
կաւորութիւնն է հասկացողութիւնը կամ գիտու-
թիւնը: Ամաստին յղում է նոյն ալմաստը. մար-
դու խելքը—ուղեղի բերքը յղվում է նոյն խել-
քով, այսինքն այն գիտութիւններով, հասկացո-
ղութիւններով, որոնց մարդկութիւնը ձեռք է բե-
րել հաղարարութեան ընթացքում արած
փորձերից: Մենք չենք ասում, թէ ամեն մէկը
պարտաւոր է գիտական լինել: Բայց ամենքը
պարտաւոր են հասկացող, զարգացած լինել:
Մարդու կենսութիւնը չը կայ մի արուեստ, մի պա-
պարկուհի, որ հնարաւոր լինէր առանց նախա-
պատրաստութեան: Ի հարկէ գերբնական գիտու-
թիւններ անմասնելի և միանգամայն անհարկաւոր
են. աւելի օգտաւէտ են բնական գիտութիւնները
ևս. աւելի օգտաւէտ են բնական գիտութիւնները:
Չը կարողաւոր ընտելանալ հետ ծանօթութիւնը: Ու-
րաւ ըստ իր անպարտաւորութեան, այնքան էլ լայն
է բնութեան հետ ծանօթութիւնը, այնքան տեղի
է դրոյցացած է ուղեղը, այնքան աւելին առաջ է:

Իտալացիների և սպանիացիների մէջ: Միւս լրա-
գրները կարծում են, որ զերմանական կառավա-
րութիւնը կամենում է համոզել Աւստրիային, որ
կարելի է գնալ Հռոմ և միաժամանակ այցելել
թէ պապին և թէ իտալական թագաժառանգին:
«Tagblatt» աւելացնում է, որ եթէ պապը պատ-
ճառ կը րեւի, որ անկարելի է թողնել իր բան-
տը, Վատիկան, թագաժառանգին փոխ-այցելու-
թիւն գործելու համար, արդեօք կը բաւականանայ
զերմանական ինքնադրութիւնը այդպիսի ներ-
դրութիւնով: Միւս կողմից հաղորդում են, որ
չուտով տեսնվելու են միմեանց հետ ուսուց,
աւստրիական և զերմանական կայսրները:

— Նորերում «Figaro» լրագրը մի յօդուած
տպեց, որ զերմանական լրագրները ուրախու-
թեամբ արտաստեցին: Մի ժամանակ մենք ջարդ-
վեցանք, ասված է յօդուածի մէջ, և դրա համար
պատժված ենք. «Այժմ ինչ բանի պէտք է դի-
մենք մեր երկրի բարձրացնելու համար: Փոխա-
նակ կենտրոնական պետութիւնների բարեկամու-
թիւնը ձեռք բերելու, մեր մասուր անդադար
վրէժխնդրութեան մասին էր խօսում, ազգայնում
էր էլզասի մասին, մինչդեռ կառավարութիւնը
վստահեցում էր զօրքերը, զինաւորում էր իր դէմ
միւս պետութիւններին և յարձակում էր Պրու-
սիայի վրայ: Այնուհետև, հեղինակը հարց-
նում է դէպի Պրուսիան ունեցած ատելութեան
պատճառը: «Այն, ինչ որ մենք հայրենասիրու-
թիւն ենք անուանում, ասում է նա, ոչ այլ ինչ
է, եթէ ոչ փառասիրութիւն, դատարկ երեսակա-
յական փառասիրութիւն: Եւ, տարաբաղդաբար,
հէնց այդ փառասիրութիւնն է այն ատելութեան
պատճառը, որ Ֆրանսիական բուրժուան դուրս է
դէպի Պրուսիան: Այդ ատելութիւնը մի քաղա-
քացու խորին ցաւի զգացմունք է, որ սրտի մէջ
մէջք է ստացել, որ հողով տանջվում է էլզասի,
Լոտարինգիայի և իր հայրենիքի դժբաղդութեան
համար: Ոչ, դա երես առած երեսայի բարկու-
թիւնն է, որին ստորացրել են: Վրէժխնդրութեան
մասին խօսելու տեղ Ֆրանսիան պէտք է դաշ-
նակցութիւն փնտռէ Բերլինի հետ, որովհետև դա
միակ միջոցն է նրա գործիւնը վերականգնելու
համար»:

— Որքերում Ֆրանսիական անիշխանաբանե-
րը ազգաբարձրութիւններ հրատարակեցին, հրախ-
րելով հաւաքվել զինվորային ժամի մէկին բոլորայի
հրապարակի վրա: Նրանց սպանաւորութեան պատ-
ճառով կառավարութիւնը մեծ հոսանք ցոյց տը-
վեց: Ամբողջ պոլիցիան ոտքի վրա էր և բացի
այդ, հրապարակի մօտ մի բառալիւն զօրք էր
կանգնած: Արմատական լրագրները մեղադրում
էին միմեարեութեանը, իրր թէ նա է հնարել ա-
նիշխանականների սպանաւորութեանը փարկի բուր-
ժուանների վախեցնելու և իր գործիւնը ամրա-
ցնելու նպատակով: Միւս կողմից մեղադրում են
միապետական կուսակցութեանը, իրր թէ նա է
զրդել անիշխանականներին անկարգութիւններ
գործելու համար:

Այստեղից պարզ հասկանալի է, որ մտաւորա-
կան դարգացումը նոյնպիսի ֆիզիոլոգիական
պահանջ է մեր օրգանիզմի համար, ինչպէս և
հացն ու միւսը: Ֆիզիոլոգիան ուղեղի համար
պահանջում է ինչպէս կերակուր—զարգացում,
գիտութիւն: Առողջապահութիւնը ցոյց է տալիս,
թէ ինչպիսի գիտութիւն պէտք է ընտրել: Ինչպէս
որ ամեն մի կերակուր օգտակար չէ ստամոքսի
համար, այնպէս էլ ամեն գիտութիւն անհրաժար
չէ ուղեղի համար: Առողջապահութիւնը անար-
դարութիւն է համարում, երբ մի քանիները ու-
նեն շատ լայնարձակ գիտութիւն և չեն բաժա-
նում նրան ուրիշների հետ. անարդարութիւն է,
երբ մի մարդու ուղեղը ծանրաբեռնված է մեծ
գիտութիւններով ի վնաս ջղերի, իսկ մշակել
միայն լարում է իր ջղերին սխառնում ի վնաս
ուղեղի: Ուրեմն առողջապահութեան սկզբունքն
է—միասնական աստիճանով զարգացնել մարդու
բոլոր օրգանները:

Այս համառօտ հայեացքից դուրս է գալիս այն,
որ առողջապահութիւնը շատ կարեւոր է անհրա-
ժեշտ գիտութիւն է: Բայց նրա մանրամասնու-
թիւնների մասին բաւական չէ մի նեղ ու կարճ
լրագրական յօդուած: Առողջապահութիւնը պիտի
մեր բոլոր գիտութիւններին, մեր բոլոր ուսման
հիմնաքար դառնայ. նա անպատճառ պէտք է ա-
ւանդի մեր բոլոր թէ արական և թէ իգական
դպրոցներում միւս գիտութիւնների հետ մի շար-
քում իսկ ժողովրդի մէջ տարածելու համար հար-

— Բերլինց «Köln. Zeitung» լրագրին հա-
ղորդում են. Ֆրանսիական լրագրները մեծ ու-
շադրութիւն դարձրին մարշալ Սերրանի խօսակ-
ցութեան վրա Ֆրանսիական հանրապետութեան
նախագահի հետ: Այդ լրագրները մարշալի խօս-
քերից եղբակացնում են, որ Սպանիայի և Ֆրան-
սիայի բարեկամութիւնը հետզհետէ կընդարձակվի,
քանի որ երկու երկրների մէջ համակրութեան և
յարգանքի զգացմունքները աւելի կը լինեն: Գեր-
մանիայի մէջ համոզված են, թէ որքան էլ այ-
տարուստ Սպանիան և Ֆրանսիան միմեանց բա-
րեկամութիւն ցոյց տան, Ալժիր թագաւորի հետ
փարկի մէջ պատահած անցքից յետոյ այդ բա-
րեկամութիւնը տնկարող է խորը արմատներ
գցել:

— Խաբուստի աւստրիական հիւպատոսից դու-
ս չէ ստացվել այն լուրի հաստատութիւնը, իրր
թէ Գիլի-փաշայի զօրքերի երրորդ մասը ազատ-
վել է Սուդանի մէջ: Սարապը Խաբուստի մէջ
փորքանում է, չեն հաւատում, որ սուտ մարգարէ
Մահդի դիտաւորութիւն ունենայ շարունակել իր
արշաւանքը: Սուդանի արշաւանքի համար 100,000
ֆունտ ստերլինգ ծախս է արված: Բնկեր-փաշա
ուղեւորվել է Սուդան 3000 մարդկանցով բացա-
ռապէս այն նպատակով, որ վերականգնէ հաղոր-
դակցութիւնը Սուակիլի և Բէրբէրի մէջ:

— «Times» լրագրի ստացած հաղորդութիւնը
Մադագասկարից հերքում է այն լուրը, իրր թէ հա-
ւանների զենպանները Տանանիարի վերադառնա-
լուց յետոյ խեղդամահ են արված: Ընդհակառա-
կը նրանք շատ լաւ ընդունվեցան:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒՄԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՆԵՐ

ԼԻԻՆԲՈՒՐԳ, 10 զեկտեմբերի: Գլխաւոր տաս դի-
նամիտ պատրաստողները դատապարտված են՝
հինգ տարեկան աշխատանքի աւերող կենսի
ժամանակ և հինգը խօթ տարով:

ԵԿԱՏԵՐԻՆՍՈՒՄ, 10 զեկտեմբերի: Նահան-
գական գեմետովի ժողովը որոշեց 4000 բուրձ
նշանակել ժողովրդական օրհնակին զարդ բա-
նալու համարի յիշատակ բարոն Կօրֆի և նրա հի-
մունքների վրա:

ԽՍԿՎՊ, 10 զեկտեմբերի: Խաբուստի գլխաւորա-
կան դատարանի բաժինը Պալլադիսի մէջ (Վ. օրհնէժի
նահանգ), քննելով վախճանի օրհնակին վրէժ-
խնդրութիւնից և առաջուց ունեցած դիտաւորու-
թեանը սպանելու գործը, դատապարտեց՝ զինուոր
Ուշալովին հրացանատան անել, զինուոր կրտսիր-
կովին տաժանակի աշխատանքների առանց ժա-
մանակամիջոցի և ունեւոր—օֆիցեր Սալեւելին
տաժանակի աշխատանքների վեց տարով: Գա-
տալիւնը ներկայացրած է շրջանի զօրքերի հրա-
մանատարի հաստատութեանը:

կաւոր են ժողովրդական, հասկանալի լեզուով
գրուածները: Գիտութեանց ոչ մի ճիւղի վերա-
բերված գրվածքներ չեն կարող այնքան մասնաւոր
հասկանալի լինել, որքան ժողովրդական գրուած-
քներ առողջապահութեան մասին: Նրան հասկանա-
լու, սովորելու համար հարկաւոր է մասնագիտու-
թիւն, որից գիտութիւնների օգնութիւն: Հասկանալ
հնչւո, եթէ ձեռքի տակ լինեն դիւրամատչելի,
պարզ հասկանալի գրուածքներ: Հայերի մէջ, աչ-
քի առաջ ունենալով առողջապահութեան ան-
նպաստ պայմանները, անկանոն և վնասակար
ուղղութիւնը, առաջին անհրաժեշտութիւն պէտք
է համարել առողջապահութեան վերաբերված հե-
ղինակութիւններ տարածել: Այստեղ էլ աչքի է
ընկնում սառն անտարբերութիւն մեր ուսումնա-
կանների կողմից: Մեր գրականութեան մէջ կան
մարդիկ, որոնք երեսկայելով իրանց նօթներով
կրկնում, գոչում, բղաւում են ամեն տեսակ, թէ
իրանք են միայն գրել շարժելու ընդունակութիւն
ունեցողները. նրանք խտակ գոն-քիչօտական քա-
ջապատութեամբ կաւում են գրականութեան մէջ
գործողներին հետ շատ անգամ չնչին, աննշան բա-
նի համար, չեն զգանում լցնել մեր պարբերական
հրատարակութիւնների էջերը զանազան անմիտ
օրհնակներով, կուսոց—գոչումներով, բայց մի
օրուտ տալ ժողովրդին, հասկացնել հէնց գոնէ
առողջապահութեան տարրական սկզբունքները—
այդ մասին չեն մտածում. և որ աւելի զարմանա-
լին է, ժողովուրդը սովորել է ապրել այդպիսի
անմիտ գրուածքներով, մի և նոյն ժամանակ աչ-

SUՇԿԷՆՏ, 10 զեկտեմբերի: Երէկ օժիցաւ
այստեղի կաթօլիկական եկեղեցին և բացվեցաւ
հիւանդանոց տեղացի կանանց համար:

ՍՍՐՍՏՈՎ, 10 զեկտեմբերի: Բարօնակի, Պօկ-
բովսկի, Բօմբօի, Պրիվօնի և Կամիշնի մէջ զիգ-
ված է 393,250 չեռվեւո ցորեն: Շոգենաւատէ-
րերը առաջին երկու բէյերի համար զէպի Բի-
րինով խնդրում են 10 կ., իսկ տէրերը տալիս են
8 1/2 կ., իւրաքանչիւր պուդլից: Համաձայնութիւն
դու չը կայ:

ՊԷՇՏ, 10 զեկտեմբերի: Թագաւորական դատա-
րանը հաստատեց առաջին կարգի դատարանի
վճիւր Տիտա-Խարան գործի մասին:

ՓԱՐԻԶ, 10 զեկտեմբերի: Ֆրանսիական զօրքե-
րից Սօնայի վերջնելու լուրը, որ ստացվեցաւ
Գեկտեմբերի 4-ին, հաստատվում է պաշտօնապէս
զեկտեմբերի 5-ին գրուած է միջնաբերդը: Թշնամին
յիտ քաշվեցաւ անյայտ ուղղութեամբ: Ֆրանսիա-
ցիները կորցրին մի օֆիցեր և 11 զինուորներ
սպանվածներով, 5 օֆիցեր և 55 զինուորներ վի-
րաւորվածներով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 զեկտեմբերի: «Правит.
Вѣстн.» լրագրը հաղորդում է, որ նոյեմբերի 28-ին
բարձրագոյն օրիւ ժամանակ ձիաները վաղցրին
և շուտ տուին այն սահնակը, որի մէջ նստած
էր Թագաւոր Կայսրը: Ընկնելու ժամանակ Նորին
Մեծութիւնը սատիկ հարուած ստացաւ աջ
ուսին առանց ուղեղները վնասելու, բայց վնասե-
լով ուղեղակապերը: Առաջ Նորին Մեծութիւնը սատ-
տիկ ցաւեր էր զգում, ուստի զիչները անհան-
գիստ էր անցկացնում: Այժմ ցաւերը պակասել են,
բայց աջ թևի յօդի բարդված գրութիւնը
դու ևս շարունակվում է: Նորին Մեծութեան
հիւանդութիւնը իր բնաւորութեամբ պահանջում
է կատարեալ հանգստութիւն և կատարեալ
պէս առողջանալու համար հարկաւոր է բա-
ւական երկարատեւ բժշկութիւն: Նորին Մե-
ծութեան առողջութեան ընդհանուր դրութիւնը
կատարեալապէս բաւականացուցչ է: Լուրերի հա-
մամտ ուսուց արտաքին գործերի մինիստրը
Ռուսաստան վերադառնալու ժամանակ կայցելի
վիեննա: Երէկ կայացաւ փոխադարձ ապահովու-
թեան ժողովի վերջնական նիստը: Նիստերի պրօ-
տօկօնների ընթերցանութեանց յետոյ մի քանի
ճառեր արտասանվեցան: Այսօր ժողովի նախա-
գահը և հաւատարմատարները կը ներկայանան
ներքին գործերի մինիստրին և կը նայեն մայրա-
քաղաքի հրդեհաշէջ բաժնի, իսկ զեկտեմբերի
13-ին կը ներկայանան Ֆինանսների մինիստրին:

ԼՕՆԻՕՆ, 11 զեկտեմբերի: Գլխաւոր տաս իրան
ներկայացած բանւորների պատգամաւորութեանը
հաղորդեց, որ շուտով պարլամենտին մի օրինա-
ղիւ կը ներկայացվի ընտրողական իրաւունքի
ընդարձակման մասին:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Երբ զգեցի այնպիսի հասարակաշահ հրատարա-
ւութիւն, ինչպէս է Նրեանի «Առողջապահական
թերթը». պէտք է մեծ բախտ համարել, որ մեր
մէջ կայ մի այդպիսի օգտակար օրգան, որի մաս-
նագիտութիւնն է—առողջապահական կանոն-
ները: Բայց ախտս, որ այդպիսի հրատարակու-
թիւնը, չը նայած իր համարեա աննշան գնին,
բոլորովին տարածված չէ մեր մէջ: Հոգ չէ, եթէ
այդ հրատարակութիւնը ունենայ օպակասութիւն-
ներ, հարկաւոր է յարգել նրա սկզբունքը, ձգտումը
նա անգնահատելի ծաւալութիւն կարող է անել
ժողովրդին: Թող ամեն մի բարի, խոհմ մարդ
կարգայ այդպիսի հրատարակութիւնը. իսկ «Բեր-
թի» յարգելի խմբագրին խորհուրդ ենք տալիս
չը մնալով, գործել և հետեւ իր մարդասիրական
նպատակին որքան ուժ և կարողութիւն կունենայ,
այսպէս է աշխարհի բանը. չարութիւնը, վատու-
թիւնը սարսափելի հակադէպ քայլեր են անում
դէպի առաջ, իսկ բարին... իսկ բարութեան համար
կարող ենք կրկնել պրօֆեսոր Բէկլամի, այս գեղե-
ցիկ խօսքերը. «Բարին պէտք է կրկնել, կրկնել և
յետոյ էլի կրկնել. մինչև որ նա կը լավի»:

Մինչև այստեղ խօսեցինք ամեն մի մարդու ա-
ռողջապահութեան, այսինքն անհատական առող-
ջապահութեան մասին: Բայց կայ դեռ առողջա-
պահութիւն հասարակական, ընդհանրական և այս
մէկի մասին մենք կը խօսենք մի այլ անգամ:

Գաւառացի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՐ

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

ՐԱՅՑԻԻ «ՋԱԼԱԼԵԴԻՆ» ՎԷՊԸ:

1—7

Մամուլի տակից լոյս տեսաւ

«ԱՐԱՐԱՏԻ ԳԼՈՒԽԸ»

Հանապարհորդական տպագրութիւններին նկարագիր Դ. Լ. Մորզովցեվի. (Թիֆլիսից սկսած մինչև ԱՐԱՐԱՏԻ ԳԼՈՒԽԸ)

Մաքուր տպագրութիւն, ազնիւ թղթի վրա: Գինն է 1 ռուբլ. հանդերձ ճանապարհ հաճախով:

Ծախվում է Շուշիում փոխադրողի մօտ, որին կարելի է դառնալ այս հասցեով. Шуша, Аракелу Бабаханиянцу.

Ծանօթ. Գրքիս յարգելի բաժանորդներին յայտնում եմ ի գիտութիւն, որ ամենքէն էլ շուտով կը ստանան իրանց գրքերը: Ա. Բաբախանյանց:

1—10

ԲՈՒՇԿ ԿՕՐԵ ընդունում է հիւանդներին առաւօտները 9—12 ժամը, իսկ երեկոյեան 5—7-ը ժամ: Հաւաքար, Բօգոլայա հրապարակ տուն № 13:

1—2 (1)

Յունվարից, մեր ԿԱՆԱՆՑ ԳԵՐՁԱԿՈՒԹԱՆ ԱՐՀԵՏԱՆՈՅՈՒՄ երկու աշապիկներով ընդունելութիւն կը լինի: Արհեստանոցի կազմակերպութիւնը ամերիկական ամենամօր սխաւմայով է, արհեստի ուսման կէտից յետոյ աշակերտները համարվում են ընկերներ և ԱՐԺԱՆԱՌՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ ՆԵՒ ՍՏԱՆՈՒՄ: Արհեստանոցի կառավարիչ և ուսուցիչ ԳՐԻԳՈՐ ԱՆՆԵԱՆՑ:

1—2 (1)

ՀԱՅՈՑ ԿՈՎԿԱՍԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

2. Հայոց Կովկասի Բարեգործական ընկերութեան անդամակցութեան տոմսերը ներկայ երրորդ տարեշրջանի համար ծախվում են ՆՈՎԱՆՆԵԱՆ ԵՂԵՐԱՅ ԸԱՆԿԱՅՈՒՄ, պ. ԵՓ. ՆԱՏՈՒՐԵԱՆՑԻ ՆԵՒ ԼԱՄԱՅԱՆԻ ԺԱՊԱՅՈՒՄ և ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ու ԿՈՎԿԱՍԵԱՆ գրախառնանոցներով:

Հայոց Կովկասի Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը, ընկերութեան խորհրդի անդամներ և փոխանդամներ ընտրելու համար, լինելու է իրարից, ամեն 18-ին, առաւօտեան 11 ժամին, Արժրուճութան տունում:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է յընդհանուր տեղեկութիւն, որ այս դեկտեմբերի 17-ին, նրա ներկայութեամբ, աճուրդ կը կայանայ կապուղի տալու Միքայէլեան կամուրջի և Միքայէլեան շօտէի ջրերը և այդ պատճառով ցանկացողները մասնակցել աճուրդին հրաւիրվում են վերոյիշեալ ժամանակամիջոցին, առաւօտեան 11 ժամին: Պայմանները կարելի է տեսնել վարչութեան մէջ ամեն օր առաւօտեան 10-ից մինչև 2 ժամը:

2—3

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

Այն պարոններին և զրաւաճառանոցներին, որոնց կամ ուր ուղարկված են վաճառելու «ԵՍ ԵՒ ԽՄ ՍԱՋԻ» օրինակները, շտապեն վաճառուածները փողերը և, եթէ չեն ցանկանում շարունակել վաճառումը, մնացած օրինակները ինձ հասցնել այս հասցեով. Чрезъ Просковою въ гор. Св. Креста. Учителю Сафарянцъ.

Մեր «Բնախօսութիւն» գիրքը, որ մինչև այժմ մի օրինակը վաճառվում էր նշանակած գնով—80 կոպէկով, այսուհետև կը վաճառվի 50 կոպէկով: Գիրքը պէտքական է թէ ուսումնարաններին, թէ ուսուցիչներին, և ընթերցող դասի համար: Ցանկացողները կարող են ձեռք բերել Թիֆլիսի գրախառնանոցներից և երևանում «Մանկանց բարեկամ» գրատնից, իսկ կիւրակէ օրերը Եւրմուկայում, Աղէքսանդրեան այգու դիմաց:

Հրատարակիչ Մ. Բաղինեանց.

«ԱՌՈՂՋԱՊԱՏԱԿԱՆ ԹԵՐՈՒ»

Խմբագրութիւնը ընդունում է բաժանորդագրութիւն 1884 թ. (որ է 3 տարեշրջան):

«ԹԵՐՈՒ» կը հրատարակվի ԵՐԵՒԱՆՈՒՄ, նախընթաց տարիների ծրագրով, կը տպագրվի պ. Էմին Տէր-Գրիգորեանցի տպարանում:

Ցարեկան գինն է՝ 3 ռուբլ. կանխիկ վճարելի:

Ստորագրել կարելի է խմբագրատանը, օտար քաղաքացիք գիմում են հետեւեալ հասցեով. В г. Эривань. Въ редакцію журнала «Гигиеническій Листокъ».

Խմբագիր-հրատարակիչ բժ. ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑ:

ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՑԱՒԵՐԸ

ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ «ԲՈՒԴՕ»

Այդ գինին շատ դուրեկան համուռն է, 25 տարի շարունակ զօրժ է անփում հետեւեալ ղեկավարներում. ԽԱՌԺԱԿԻ ԲԱՅԱԿԱՅՈՒԹԵԱՆ, ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՑԱՒԵՐԻ և առհասարակ ԱՆԿԱՆՕՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ժամանակ:

Պէպսին «Բուդօ» ճանաչված է փարիզի բժշկական Ակադեմիայից և արժանացաւ առաջին մեդալների ֆուրիշի աշխարհահամագումարում 1867 թ. Վիէննայի 1873 թ. Ֆիլադելֆիայի 1876 թ. և ֆուրիշի 1878 թ.:

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.

Գլխաւոր պահեստը ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Բարձրագոյն հաստատված Կովկասեան ընկերութեան ղեկաւորան ապրանքների վաճառման:

Գէպօ Շահ-Պարոնեանցի, և Գրիվալիի այլ ղեկաւորներով:

Ալիւր Ա. Մ. Բրոդսկու. (Օդէսայից) Мука А. М. Бродского (изъ Одессы).

Ամբողջ Կովկասի համար միակ գործակատար լինելով, ես պատիւ ունեմ յայտնել պատուելի հասարակութեանը, որ ես վերոյիշեալ ջրաղացի ամեն տեսակ ալիւրի պահեստ եմ բացել Բաթում քաղաքում «Օդէսա» հիւրանոցի տակ:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել իրանց պահանջներով վերոյիշեալ պահեստը, ՈՒՐ ԱԼԻՐԸ ԿԸ ՆՍԱՎԻ ՕԴԵՍՍԻ ՋՐԱՂԱՅՈՒՄ ԵՂԱՍԵ ԳՆԵՐՈՎ, միայն հաշիւ վրա աւելացնելով ֆրախտը մինչև Բաթում:

Ալիւրի յատկութեան մասին աւելորդ է մանրամասն խօսել, որովհետև այդ ալիւրը իր բարձր արժանաւորութիւններով ամենքին արդէն յայտնի է, իսկ պատուիրողի պահանջը ճշտութեամբ կատարելու համար պահեստը կատարելապէս երաշխաւորում է:

Աղէնա Ս. Մ. ՎՕՔԷԳՈՆ

3—5 (2)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈՒԿԵՆԱԻՍՏԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ Լ ԸՆԿ.

MINGRELIE (ՄԻՆԳՐԵԼԻԱ)

Հինգշաբթի 8 դեկտեմբերի հասաւ ՓՕԹԻ

չողկանք որի նաւապետն է ՆԷԼ (NEL)

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան ագենտներին. Փոթիում պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. ԲԸՆՕՒՆ, Արժրուճութան գալերէա, № 194.

СЪ 1-ГО ЯНВАРЯ 1884 ГОДА

ВЪ ТИФЛИСѢ БУДЕТЪ ИЗДѢАТЬСЯ

новая ежедневная (350 номеровъ въ годъ) литературно-политическая газета

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

подъ редакцію А. В. Степанова (бывш. редакторъ „Юридическаго Обозрѣнія“).

Объемъ газеты—печатный листъ среднего формата; программа—общая всѣмъ литературно-политическимъ ежедневнымъ изданіямъ.

Подписная цѣна съ пересылкою и доставкою: на годъ—10 руб.; на 6 мѣс.—6 р., на 3 мѣс.—3 р. 50 к., на 1 мѣс. 1 р. 50 к.

Подписка (городская и иногородная) и объявленія (по 5 к. за строку пети) принимаются въ Тифлисѣ исключительно въ Газетномъ Агентствѣ В. Шавердова, въ С.-Петербургѣ-же и Москвѣ—въ книжныхъ магазинахъ „Новаго Времени“.

Временное (до 15-го декабря) помѣщеніе редакціи: Давидовская ул., д. Кана-квартира нова, редактора.

За газетою обезпечено постоянное сотрудничество: кн. К. А. Бебутова, Вс. М. Гаршина, П. А. Измайлова, С. Н. Кривенко, Н. Я. Николадзе, П. А. Опочинина, А. Н. Плещеева, И. Ф. Тхоржевскаго, Гл. И. Успенскаго, Н. А. Шаврова.



ԱՆԴՐԿՈՎ ԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՑՔՆԵՐ ԲԱԹՈՒՄԻ ՆԻ ԲԱԿՈՒԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
Ժամ. րոպէ.	Ժամ. րոպէ.	Ժամ. րոպէ.	Ժամ. րոպէ.	Ժամ. րոպէ.	Ժամ. րոպէ.
Բաթում . . .	—	8— առ.	Բազու . . .	—	10—23 առ.
Սամորեղի . .	12—2	12—18	Գանձակ . .	12—20	12—48 գիշ.
Րիօն . . .	1—9	1—22	Թիֆլիս . .	7—49	8—31 առ.
Սուրամ . . .	6—8	6—11 երեկ.	Գորի . . .	10—56	11—
Միխայլով . .	6—23	6—33	Միխայլով . .	12—26	12—46
Գորի . . .	7—53	8—2	Սուրամ . .	12—58	1—1
Թիֆլիս . .	10—25	11—11	Րիօն . . .	5—54	6—9 երեկ.
Գանձակ . .	6—20	6—39 առ.	Սամորեղի . .	7—	7—20
Բազու . . .	8—8 երեկ.	—	Բաթում . .	11—21 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ Լ ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
Ժամ. րոպէ.	Ժամ. րոպէ.	Ժամ. րոպէ.	Ժամ. րոպէ.	Ժամ. րոպէ.	Ժամ. րոպէ.
Սուրամ . . .	—	1—38 գիշեր.	Թիֆլիս . .	—	3—11
Միխայլով . .	1—50	2—5	Գորի . . .	6—30 երեկ.	6—41
Գորի . . .	4—6	4—30	Միխայլով . .	8—41	8—56
Թիֆլիս . .	8—առաւ.	—	Սուրամ . .	9—8 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ՍԱՄՏՐԵԿԻԻ Լ ՓՕԹԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
Ժամ. րոպէ.	Ժամ. րոպէ.	Ժամ. րոպէ.	Ժամ. րոպէ.	Ժամ. րոպէ.	Ժամ. րոպէ.
Փոթի . . .	—	8—45 առ.	Սամորեղի . .	—	7—30 երեկ.
Սամորեղի . .	11—39 առ.	—	Փոթի . . .	10—24 երեկ.	—